ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ



ՈՒՂԵՑՈՒՅՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՓՈԽՎՈՂ ԿԱՄ ՓԱԽՍՏԱԿԱՆԻ, ՀԱՐԿԱԴԻՐ ՏԵՂԱՀԱՆՎԱԾԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՍՏԱՑԱԾ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

2024

Ուղեցույցի նպատակն է տեղեկացնել Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության տեղափոխվող կամ փախստականի, հարկադիր տեղահանվածի կարգավիճակ ստացած ֆիզիկական անձանց տրամադրվող արտոնությունների մասին

ԻՐԱՋԵԿ ԼԻՆԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՓՈԽՎԵԼԻՍ

Ուշադրություն

Հայաստանի Հանրապետության սահմանով ֆիզիկական անձանց կողմից ապրանքների տեղափոխմանը վերաբերող կարգավորումներին ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ այցելելով ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական կայքէջ՝
https://src.am/am/getMenusContents/266:

Հնարավոր է անցում կատարել նաև հետևյալ QR կոդով՝

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ



1. Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության տեղափոխված անձ ճանաչված կամ փախստականի, հարկադիր տեղահանվածի կարգավիճակ (այսուհետ՝ համապատասխան կարգավիճակ) ստացած օտարերկրյա ֆիզիկական անձինք մաքսային վճարներից ազատման ինչպիսի՞ արտոնությունից են օգտվում.

Համապատասխան կարգավիճակ ստացած օտարերկրյա ֆիզիկական անձինք կարող են մաքսատուրքերի հարկերի վճարումից ազատմամբ Հայաստանի Հանրապետություն ներմուծել ՀՀ կառավարության կողմից սահմանված չափաքանակները չգերազանցող իրենց անձնական օգտագործման օգտագործված ապրանքները:

2. Մաքսատուրքերի հարկերի վճարումից ազատմամբ (այսուհետ՝ արտոնություն) անձնական օգտագործման ապրանքներ ներմուծելու համար՝ համապատասխան կարգավիճակ ստացած օտարերկրյա ֆիզիկական անձինք, ինչպիսի՞ միաժամանակյա պայմանների բավարարումը պետք է ապահովեն.

Արտոնությունից հնարավոր է օգտվել հետևյալ պայմանների միաժամանակյա ապահովման դեպքում.

- նախորդ բնակության երկրից Հայաստանի Հանրապետության տարածք ապրանքների, այդ թվում տրանսպորտային միջոցների ներմուծումն իրականացվում է ոչ ուշ, քան օտարերկրյա ֆիզիկական անձին համապատասխան կարգավիճակ ստանալու փաստը հաստատող փաստաթղթի տրման օրվանից 18 ամսվա ընթացքում.
- անձնական օգտագործման ապրանքները ձեռք են բերվել օտարերկրյա ֆիզիկական անձին համապատասխան կարգավիճակը հաստատող փաստաթղթի տրման օրվանից առաջ, ընդ որում՝ անձնական օգտագործման տրանսպորտային միջոցներ հանդիսացող ավտոտրանսպորտային և մոտոտրանսպորտային միջոցները, ավտոտրանսպորտային և մոտոտրանսպորտային միջոցների կցորդները **գրանցված են եղել և գտնվել են** արտոնությունից օգտվելու ցանկություն ունեցող ֆիզիկական անձի **սեփականության ներքո** (կամ **ձեռք են բերվել վարկային կամ լիզինգային պայմանագրով և գտնվել են տիրապետման ներքո**), այդ անձի նախկին բնակության երկրում՝ **առնվազն վեց ամսվա ընթացքում**՝ համապատասխան կարգավիճակը հաստատող փաստաթղթի տրման օրվանից առաջ: Վարկային կամ լիզինգային պայմանագրի հիման վրա ձեռքբերված նշված տրանսպորտային միջոցները՝ դրանց ազատ շրջանառության նպատակով բացթողնմանն ուղղված մաքսային գործառնությունների իրականացման պահին պետք է գտնվեն այդպիսի անձի սեփականության ներքո:
- համապատասխան կարգավիճակ ստանալու հետ կապված՝ Հայաստանի Հանրապետության տարածք մաքսատուրքերի, հարկերի վճարումից ազատմամբ անձնական օգտագործման ապրանքներ այդ ֆիզիկական անձի կողմից **նախկինում չեն ներմուծվել**.
- համապատասխան կարգավիճակ ստացած օտարերկրյա ֆիզիկական անձի անձնական օգտագործման ապրանքները **չեն գերազանցում** Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած **բնաիրային չափերը**:











3. Համապատասխան կարգավիճակ ունեցող ֆիզիկական անձին պատկանող ո՞ր անձնական օգտագործման ապրանքներին է տրամադրվում արտոնությունը.

Արտոնությունը տրամադրվում է միայն օգտագործված և ՀՀ կառավարության կողմից սահմանված ստորև ներկայացվող բնաիրային չափերը չգերազանցող ապրանքներին.

- կենցաղային և անձնական օգտագործման սարքեր՝ յուրաքանչյուր տեսակից 3 հատ, /օրինակ՝ սառնարան, հեռուստացույց/,
- օգտագործված կահույք՝ յուրաքանչյուր տեսակից մեկ լրակազմ,/օրինակ՝ ննջասենյակի կահույք, հյուրասենյակի կահույք/,
- անձնական գործածության իրեր և օգտագործված տնային այլ գույք՝ առանց քանակային սահմանափակումների /օրինակ՝ հագուստ, սպասք/,
- անձնական օգտագործման տրանսպորտային միջոց /օրինակ՝ ավտոմեքենա, մոտոցիկլետ, և դրանց կցորդներ՝ յուրաքանչյուր տեսակից 1 միավորից ոչ ավելի:

Ուշադրություն

Անձնական օգտագործման տրանսպորտային միջոց համարվող տրանսպորտային միջոցները սահմանված են ԵՏՀ կոլեգիայի 30.06.2017 թվականի թիվ 74 որոշմամբ:

4. Պետական ո՞ր լիազոր մարմինն է տրամադրում օտարերկրյա ֆիզիկական անձին մշտական բնակության համար Հայաստանի Հանրապետություն տեղափոխված անձ ճանաչելու կամ փախստականի կարգավիճակի վերաբերյալ փաստաթուղթը.

Օտարերկրյա ֆիզիկական անձին մշտական բնակության համար Հայաստանի Հանրապետություն տեղափոխված անձ ճանաչելու կամ փախստականի կարգավիճակի վերաբերյալ փաստաթուղթը տրամադրում է ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը:

5. ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը ինչպիսի պայմանների բավարարման դեպքում է տրամադրում օտարերկրյա ֆիզիկական անձին մշտական բնակության համար Հայաստանի Հանրապետություն տեղափոխված անձ ճանաչելու վերաբերյալ փաստաթուղթը.

Օտարերկրյա ֆիզիկական անձին մշտական բնակության համար Հայաստանի Հանրապետություն տեղափոխված անձ ճանաչելու վերաբերյալ փաստաթուղթը տրամադրվում է այն դեպքում, եթե

- օտարերկրյա անձը փաստաթղթի համար դիմելու օրվան նախորդող *2550 օր* ժամանակահատվածում առնվազն ***1280 օր*** բացակայել է Հայաստանից;
- անձն ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, կամ Հայաստանի Հանրապետության հատուկ, կամ մշտական (երկարաժամկետ) կացության կարգավիճակ կամ միջազգային պայմանագրով սահմանված դեպքում դրանց հավասարեցված կարգավիճակ:

Ուշադրություն.

Օտարերկրյա ֆիզիկական անձին մշտական բնակության համար Հայաստանի Հանրապետություն տեղափոխված անձ ճանաչելու վերաբերյալ փաստաթուղթը նույն անձին տրամադրվում է միայն մեկ անգամ, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ անձը, նախկինում ստանալով Հայաստանի Հանրապետության մշտական բնակության տեղափոխման փաստի ճանաչումը հաստատող փաստաթուղթը, ստանալու օրվանից 18 ամսվա ընթացքում, չի օգտվել մշտական բնակության ժամանող օտարերկրյա ֆիզիկական անձանց համար նախատեսված մաքսային վճարների արտոնությունից:

6. Ի՞նչպես օգտվել արտոնությունից.

Մշտական բնակության համար Հայաստանի Հանրապետություն տեղափոխված անձ ճանաչելու վերաբերյալ փաստաթուղթը ստանալուց հետո անհրաժեշտ է դիմել մաքսային մարմիններին՝ Հայաստանի Հանրապետություն ներմուծված ապրանքները մաքսային վճարների արտոնություններով ձևակերպելու համար:

7. Ապրանքներն արտոնությամբ հայտարարագրելու նպատակով ներկայացվող դիմումին և փաստաթղթերին վերաբերող ինչպիսի պահանջներ են սահմանված օրենսդրությամբ.

Դիմումը ներկայացվում է ազատ ոճով, սակայն այն պետք է պարունակի տեղեկություններ Հայաստանի Հանրապետություն ներմուծված անձնական օգտագործման օգտագործված ապրանքների անվանման, քաշի և քանակի վերաբերյալ:

Դիմումին անհրաժեշտ է կցել հետևյալ փաստաթղթերը.

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, կամ Հայաստանի Հանրապետության հատուկ, կամ Հայաստանի Հանրապետության մշտական (երկարաժամկետ) կացության կարգավիճակ, կամ միջազգային պայմանագրով սահմանված դեպքում դրանց հավասարեցված կարգավիճակ ունենալու հանգամանքը հաստատող փաստաթուղթը, բացառությամբ փախստականի, հարկադիր տեղահանվածի կարգավիճակ ստացած օտարերկրյա ֆիզիկական անձանց.

2) օտարերկրյա ֆիզիկական անձին մշտական բնակության համար Հայաստանի Հանրապետություն տեղափոխված անձ ճանաչող կամ փախստականի, հարկադիր տեղահանվածի կարգավիճակը հաստատող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի տրամադրած փաստաթուղթը.

3) մինչև Հայաստանի Հանրապետություն ժամանումն օտարերկրյա պետությունում ֆիզիկական անձի բնակության փաստը հավաստող փաստաթուղթը.

4) անձնական օգտագործման ապրանքների հայտարարագրման ժամանակ պահանջվող փաստաթղթերը.

5) օտարերկրյա պետության լիազոր մարմնի տրամադրած՝ անձնական օգտագործման տրանսպորտային միջոցներ հանդիսացող՝ ավտոտրանսպորտային և մոտոտրանսպորտային միջոցների, ավտոտրանսպորտային և մոտոտրանսպորտային միջոցների կցորդների արտոնությունից օգտվել ցանկացող ֆիզիկական անձի անունով գրանցման և սեփականության փաստը հաստատող փաստաթղթերը՝ անձնական օգտագործման տրանսպորտային միջոցի ներմուծման դեպքում:

Ուշադրություն

Փաստաթղթերը օտար լեզվով ներկայացնելու դեպքում, մաքսային մարմնի պահանջով, դիմումատուն պարտավոր է ներկայացնել նաև դրանց՝ օրենքով սահմանված կարգով կատարված հայերեն թարգմանությունները:



8. Ո՞րտեղ կարող են պահպանվել համապատասխան կարգավիճակ ստանալու մտադրություն ունեցող օտարերկրյա ֆիզիկական անձի անձնական օգտագործման ապրանքները, եթե համապատասխան կարգավիճակը հաստատող փաստաթղթերի ստացման գործընթացը ժամանակատար է.

Համապատասխան կարգավիճակ ստանալու մտադրություն ունեցող օտարերկրյա ֆիզիկական անձի անձնական օգտագործման ապրանքների ժամանակավոր պահպանումը կարող է իրականացվել այդ անձի մշտական կամ ժամանակավոր բնակության (գտնվելու) կամ նշված անձանց կողմից ներկայացված այլ վայրերում՝ պայմանով, որ պետք է ապահովված լինի մաքսային մարմինների կողմից մաքսային հսկողության իրականացման հնարավորությունը:



9. Ի՞նչ պետք է անի համապատասխան կարգավիճակ ստանալու մտադրություն ունեցող օտարերկրյա ֆիզիկական անձն, իր անձնական օգտագործման ապրանքները մշտական կամ ժամանակավոր բնակության (ժամանման) կամ նշված անձանց կողմից ներկայացված այլ վայրերում ժամանակավոր պահպանման հանձնելու համար.

Անձնական օգտագործման ապրանքները մշտական կամ ժամանակավոր բնակության կամ նշված անձանց կողմից այլ վայրերում ժամանակավոր պահպանման հանձնելու համար համապատասխան կարգավիճակ ստանալու մտադրություն ունեցող օտարերկրյա ֆիզիկական անձը, պետք է մաքսային մարմնին ներկայացնի ազատ ոճի դիմում, որում պետք է նշի ստորև ներկայացվող տեղեկությունները և կցի դրանք հիմնավորող փաստաթղթերը.

- տեղեկություններ իր մասին (ազգանունը, անունը և հայրանունը (առկայության դեպքում)), անձը հաստատող փաստաթղթերի վավերապայմանները, մշտական կամ ժամանակավոր բնակության (ժամանման) հասցեն, որում ենթադրվում է, որ իրականացվելու է ապրանքների ժամանակավոր պահպանումը);
- տեղեկություններ ապրանքների մասին (անվանումը, քանակը, քաշը կիլոգրամներով և (կամ) չափման այլ միավորներով, արժեքը (ՀՀ դրամով, Եվրոյով կամ ԱՄՆ դոլարով);
- տեղեկություններ ավտո և մոտոտրանսպորտային միջոցի մասին և (կամ) ավտո և մոտո տրանսպորտային միջոցի կցորդի մասին (հաշվառման համարը, կամ տեղեկատվություն հաշվառումից հանելու վերաբերյալ, տեսակը, մակնիշը, թողարկման տարեթիվը, թափքի համարը կամ նույնականացման համարը, շարժիչի ծավալը, շարժիչի հզորությունը (այդպիսի տեղեկատվության առկայության դեպքում), շասսիի համարը (առկայության դեպքում), արժեքը (ՀՀ դրամով, Եվրոյով կամ ԱՄՆ դոլարով):

10. Ի՞նչ ժամկետով կարող է իրականացվել համապատասխան կարգավիճակ ստանալու մտադրություն ունեցող ֆիզիկական անձի ապրանքների ժամանակավոր պահպանությունը՝ այդ անձի մշտական կամ ժամանակավոր բնակության (ժամանման) կամ նշված անձանց կողմից ներկայացված այլ վայրերում.

Ժամանակավոր պահպանությունը կարող է իրականացվել հետևյալ ժամկետներով.

- մինչև դիմումը մաքսային մարմնի կողմից գրանցելու օրվան հաջորդող օրվանից 2 ամիսը լրանալու օրը՝ եթե ֆիզիկական անձը այդ ընթացքում դիմումը գրանցած մաքսային մարմնին չի ծանուցել այն գործողությունների իրականացման մասին, որոնք ուղղված են այդ անձի՝ համապատասխան կարգավիճակը հաստատող փաստաթուղթը ստանալուն;
- մինչև համապատասխան կարգավիճակը հաստատող փաստաթուղթը ստանալու օրվան հաջորդող օրվանից 5 աշխատանքային օրը լրանալը
- մինչև ֆիզիկական անձի՝ համապատասխան կարգավիճակը հաստատող փաստաթղթի տրամադրումը մերժելու օրվան հաջորդող օրվանից 10 աշխատանքային օրը լրանալը:

Ուշադրություն.

Ժամանակավոր պահպանման տակ գտնվող՝ անձնական օգտագործման տրանսպորտային միջոցներ հանդիսացող ավտոտրանսպորտային ու մոտոտրանսպորտային միջոցների և (կամ) ավտոտրանսպորտային ու մոտոտրանսպորտային միջոցների կցորդների օգտագործումը թույլատրվում է մաքսային մարմնի գրավոր թույլտվությամբ՝ մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարումն ապահովելու պայմանով:



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

https://www.facebook.com/petekamutner/

https://www.instagram.com/src_armenia/

https://twitter.com/petekamutner

https://www.src.am/am

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ